

բերէ Ս. Գերեզման ոսկի թագը գլխին եւ շողշողուն սուրը ձեռքին, ան տասներկու իշխաններով Ֆրանսայէն Պուլիս կը հասնի և յոյն կայսեր հետ կը տեսակցի կենաց և մահու խնդիրներու վրայ:

Կայսրը և իրենները եղերական սխալով մը անխոհեմութեամբ Սքարբէնթոյի մօտ ուղիղ ճանապարհէն կը շեղին եւ կը մուտնային միջին անտառի մը մէջ. քիչ մնաց որ սարակինոսները անոնց վրայ պիտի յարձակէին եւ վայրի գազանները պիտի լափէին զանոնք: Բայց ահա յանկարծ հրաշալի թռչուն մը, անկասկած երկնքի պատգամաւոր մը, անոնց առջեւ կը թռչի ներդաշնակ ձայնի գեղգեղանքով մը, «ո՛վ յաղթական կայսր, Աստուած կ'ողջունէ քեզի»: Ու աննշմարելի ճանապարհով մը անվտանգ կ'առաջնորդէ զանոնք: Այդ օրէն սկսեալ, Ս. Երկրի ուխտաւորները, կը պատմէ հին հեղինակ մը, այս նոյն անտառէն անցած պահուն՝ կը տեսնեն որ իրենց առջեւ կը թռչի նախասահմանեալ թռչունը, ոստոստելով ճիւղէ ճիւղ եւ անբացատրելի սքանչելիքով մը միշտ կը կրկնէր ձեռնտու և ներդաշնակաւոր լանկերգը. «ո՛վ յաղթական կայսր, Աստուած կ'ողջունէ քեզի»: Երուսաղէմ գալով՝ գրկաբաց կ'ընդունուին պատրիարքէն. սոյն հերոսները առանց պատերազմի տէր կը դառնան Ս. Քաղաքին, կ'երկրպագեն Ս. Գերեզմանին, կը համբուրեն անոր գաւիթը եւ պատերը, քանի մը քայլ անդին, դէպի հարաւ կը հիմնեն վանք մը, հիւրատունով, եկեղեցիով եւ մատենադարանով: Պատրիարքին օրհնութիւններով գեղուն եւ ձեռքերունին նշխարներով և բարեպաշտական ընծաներով լեցուն, վերջապէս կը մեկնին և իրենց ետև կը թողուն